6) Դպրոցական խորհրդակցութեան քննութեան ենթարկուում են դըպրոցական գործին վերաբերեալ օրինագծերը. այլ և այն բոլոր հարցերը, որ մինիստրը հարկ կը համարէ նրա քննութեանն առաջարկել:

Ծանօթ. — Հանրային կրթութեան մինիստրը իր օրէնսդրական առաջադրութիւնների մէջ Հայաստանի Խորհրդին ներկայացնում է դպրոցական խորհրդակցութեան թէ մեծամասնութեան և թէ փոքրամասնութեան կարծիքներն ու եզրակացութիւնները:

7) Եթէ Հանրային Կրթութեան Մինիստրը անկարող է ներկայ գտնուել դպրոցական խորհրդակցութեան նիստին, նախագահում է անդամներից մէկը՝ խորհրդակցութեան ընտրութեամբ:

(Հաստ. սեպտ. 11-ին 1918թ.)

Հայաստանի խորհրդի անդամների սննդադրամի և ճանապարհածախքի մասին. — 1) Հայաստանի Խորհրդի անդամներին սննդադրամ է տրւում պետական գանձարանից ամսական ինը հարիւր ռուբլի, հաշուելով ամիսը 30 օր: Սննդադրամը վճարւում է երկու նուագ՝ իւրաքանչիւր ամսի 15-ին և վերջին:

2) Սննդադրամը տրւում է Խորհրդի անդամին պատգամաւորական լիազօրութիւններ ստանձնելու օրից սկսած մինչև այդ լիազօրութիւնների վերջանալը:

3) Խորհրդի անդամներին պետական գանձարանից հատուցւում է ճանապարհածախք իրենց բնակավայրից մինչև Երևան երկու անգամ միայն, առաջին՝ երբ նրանք գալիս են մասնակցելու Խորհրդի աշխատանքներին և երկրորդ՝ երբ վերջանում են նրանց պատգամաւորական լիազօրութիւնները: Ճանապարհածախքը հատուցւում է՝ իրօք կատարւած ծախքը: Հատուցելիք ճանապարհածախքի դումարը որոշելիս հաշուի է առնւում միմիայն Հայաստանի Հանրապետութեան սահմաններում արած ճանապարհածախքը:

4) Խորհրդի կարգադրութեամբ Երևանից դուրս որևէ յանձնարարութիւն կատարելիս՝ պատգամաւորը ստանում է պետական գանձարանից ամբողջ ճանապարհի ծախքը, այլ և օրապահիկ—օրական 20 ռուբլի Հայաստանի Հանրապետութեան սահմաններում և օրական 30 ռուբլի՝ արտասահմանում:

5) Խորհրդի անդամի մահուան դէպքում նրան հասանելիքը վճարւում է ընտանիքին. պատգամաւորի մահուան ամսի սննդադրամը վճարւում է ամբողջ ամսի հաշուով:

6) Խորհրդի անդամը չի կարող վարել որևէ այլ պետական և կամ վճարովի հասարակական պաշտօն:

7) Առանց յարգելի պատճառի (Հայաստանի Խորհրդի ներքին կանոնադրութեան 184 յօդ.) բացակայած Խորհրդի իւրաքանչիւր նիստի համար պատգամաւորը զրկւում է օրահաշուով սննդադրամից. այդ դումարը հանւում է պատգամաւորին հասանելիք սննդադրամից վճարման մօտակայ նուագում:

8) Խորհրդի նախագահին, բացի պատգամաւորական սննդադրամից, տրւում է պետական գանձարանից ամսական վեց հարիւր ռուբլի ներկայացուցչութեան ծախքերի համար:

(Հաստ. սեպտ. 20-ին 1918թ.)